«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Հայոց եկեղեցու պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Թամարա Իսոյան

Ուսումնական հաստատություն՝ Գավառի հ. 2 միջնակարգ դպրոց

Երևան 2022

Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը ՀԵՊ առարկայի դասավանդման ընթացքում

Ներածություն

Կրթությունը, եթե այն հասկանում ենք նեղ իմաստով, տեղեկությունների փոխանցումն է ուսուցչից սովորողին: Այս համատեքստում այն դադարում է կատարել իր առաքելությունը: Ըստ Ջոն Ֆ. Քենեդիի՝ կրթության նպատակը գիտելիքի առաջխաղացումն է և ճշմարտության տարածումը: Ինչպե՞ս կարող ենք տարածել ճշմարտությունը, եթե չգիտենք այն: Ճշմարտությունը գտնելու և տարածելու համար է անհրաժեշտ ձևավորել արժեհամակարգ սովորողների մեջ, քանի որ այն տարածելու այլ արդյունավետ տաբերակ չկա:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիրակչական կամ
արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին
մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա
և փոխկապակցված մոտեցում:[1] Արժեհամակարգի ձևավորումը դպրոցի հիմնական նպատակն է և պետք է լինի հատկապես մանկավարժների աշխատանքի հիմնական ուղղությունը:

Ոլորտի մասնագետների կարծիքը

Նախ հասկանանք, թե ինչ կարծիք ունեն հայկական կրթության ոլորտում փորձ ունեցող ածնինք մեր կրթական համակարգի արդյունավետության և դրանով փոխանցվող արժեքների ու գիտելիքների մասին:

Կրթության ոլորտի փորձագետ Ս. Գալոյանը նշում է. «Գիտելիքները կյանքի հետ կապելու, ավելի ճիշտ, կյանքի պահանջներով պայմանավորելու դիրքորոշման

[1] Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում: էջ 112

տեսանկյունից մեր կրթական համակարգը խիստ անմխիթար վիճակում է. մենք տալիս ենք գիտելիքներ, որոնք մի կողմից երեխայի կյանքի ու կենսափորձի հետ ոչ մի առնչություն չունեն և ուրեմն մնում են նրա գլխում որպես մեռած կապիտալ: Մյուս կողմից, այն, ինչ իսկապես անհրաժեշտ է նրան, ստանում է սոսկ որպես գիտելիք: Գիտելիքի մատուցումն էլ չի ամրապնդվում համապատասխան պրակտիկայով և կրկին ժամանակի հետ մոռացվում է:

Որոշ դասագրքերի հեղինակներ ներքուստ տրամադրված, կողմնորոշված չեն ինչ-ինչ դաստիարակչական կամ ուսումնական, ներկայի համար կարևորություն ներկայացնող, խնդիրներ լուծելու: Նրանց թաքնված, թերևս չգիտակցված, կողմնորոշումը հետևյալն է. տալ գիտելիքներ հանուն գիտելիքների, ապահովել իմացություն հանուն իմացության: Թե ինչ ավերածություններ է գործում մեռած գիտելիքների այդ կոնգլոմերատը սովորողի հոգում, կարծես թե, ոչ մեկին չի մտահոգում»:[2] Այսինքն, ըստ Ս. Գալոյանի, ընդհանուր հանրակրթությունը թերանում է գիտելիքի արդյունավետ փոխանցման, ինչպես նաև սույն աշխատանքի շրջանակներում քննարկվող դաստիարակչական բնույթի խնդիրները լուծելու հարցում: Հետևաբար՝ Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման շրջանակներում նույնպես ուսուցիչը պետք է էական աշխատանք կատարի հատկապես արժեքների ձևավորման և փոխանցման գործում:

Տեր Մեսրոպ քին. Արամյանը իրավացիորեն նշում է. «լավ կրթությունը արտաքին աշխարհի ճանաչողությանը զուգահեռ պետք է ապահովի սովորողի ինքնաճանաչողության զարգացումը: Սակայն արդյո՞ք այսօր կրթությունը սեփական ինքնության բացահայտման և կայացման ճանապարհ է: Թե՞ կրթությամբ մարդն ավելի շուտ կորցնում է իրեն, քան գտնում: Համենայն դեպս ժամանակակից կրթությունը չունի ինքնատեսողության և ինքնավերլուծության, սեփական մտքերի և ապրումների կառավարման, ցանկությունների և կրքերի տիրապետման որևէ լուրջ գործիքակազմ: Հոգևոր գիտակցության ճանապարհին կուտակված դարավոր փորձառությունը պարզապես անտեսված է: Արդյունքում դպրոց և համալսարան ավարտած մարդն իր հուզական խելամտությամբ և ինքնատիրապետման

[2] Ս. Գալոյան, Ֆինլանդիայի հանրակրթական համակարգը, Մանկավարժություն, # 3, 2010, էջ 50-51

կարողությամբ կարող է ունենալ նախադպրոցական երեխայի մակարդակ: «Ո՞վ եմ ես» գոյաբանական հարցադրման պատասխանը բացահայտելու հույսը, փաստորեն, թողնված է անհատի վրա: Մարդը կա՛մ հրաշքով գտնում է իրեն՝ դուրս գալով կրթության համակարգային փակուղուց, կա՛մ անընդհատ փախչում իր հետ առերեսվելուց՝ կապանքվելով իր ներքին բարդույթների մեջ»:[3]

Տեր Մեսրոպի առաջ քաշած խնդիրները կարող են լուծվել դասավանդման ընթացքում սովորողների մեջ գաղափարահեն արժեհամակարգ ձևավորելով: Սույն հոդվածի շրջանակներում վերնագրում առաջ քաշված խնդիրը կդիտարկվի երկու հարթությունում. առաջինը ընդհանուր ակնարկ, թե ինչպես դպրոցական կրթությունը դարձնել արժեհամակարգի ձևավորման լավ հիմք, երկրորդ հարթություն՝ ինչպես դա անել Հայոց եկեղեցու պատմություն առարկայի շրջանակներում:

Նախ հասկանանք, թե ինչ է արժեհամակարգը. այն լեզվաբանական իմաստով նշանակում է արժեքների համակարգ[4]: Բարոյական արժեքները մարդու բնավորության հիմնական բաղադրիչներն են: Այն առաջնորդում է մարդկանց որոշումներ և դատողություններ կայացնելու հարցում: Դա նրանց տալիս է ճիշտ և սխալ պատկերացում: Բարոյական արժեքները կարող են տարբեր լինել յուրաքանչյուր անձի մոտ՝ կախված նրանց դաստիարակությունից և այն միջավայրից, որտեղ նրանք մեծանում են: [5]Սակայն սույն հոդվածի շրջանակներում կարևոր է հասկանալ՝ ինչ է արժեհամակարգը մանկավարժական գիտության մեջ:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և

---

[3] https://mediamax.am/am/column/121177/

[4] Ա.Ս. Գալստյան, Նոր բառեր, Պրակ Ա, Երևան, «ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ», 2015 — 196 էջ:

[5] https://tokyo.globalindianschool.org/blog-details/teaching-values-to-primary-students

համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում:

Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստույգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:[6]

Արժեքային համակարգը պատկերացվում է հետևյալ կերպ.

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի
  դրան հասնելու ձգտում ու կամք:
- Ունենա ազգային ինքնագիտակցություն,
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն...[7]

---

[6] https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf

[7] Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում էջ 39

Ի՞նչ արժեքներ են փոխանցում տարբեր կրթական հաստատություններ և ինչպե՞ս են մեկնաբանում դրանց բովանդակությունը:

Օրինակ՝ Տոկիոյի համաշխարհային հնդկական միջազգային դպրոցը սահմանում է հետևյալ արժեքները, որը դպրոցը փոխանցում է կրթության միջոցով՝ բացահայտելով դրանց բովանդակությունը:

1. Ուժեղ բնավորությունների կերտում

Ուժեղ բնավորությունը/անհատականությունը ձևավորվում է առաքինություններով և արժեքներով, որոնք երեխաները սովորում են վաղ մանկության տարիներին: Այն հիմք է դնում ապագայի համար:

Լավ արժեքները կարող են առաջնորդել երեխաներին դեպի կյանքի ճիշտ ուղին: Այդպիսի արժեքներ են բարությունը, համեստությունը, ազնվությունը, հավասարությունը և այլն: Յուրաքանչյուր ծնող ցանկանում է, որ իր երեխան կյանքում գնա ճիշտ ճանապարհով և իր դերն ունենա հասարակության մեջ: Որակավորումը և խելքը կարևոր են, բայց լավ բնավորությունը նույնքան կարևոր է, որը կարող է ցանկացած անհատականությանը առանձնացնել մյուսներից:

2. Օգնում է հասկանալ ճշտի և սխալի միջև եղած տարբերությունը

Առաքինությունները օգնում են երեխաներին տարբերել ճիշտն ու սխալը: Նրանք կարող են սցենարներ կազմելով՝ եզրակացնել ու հասկանալ՝ դա բարոյապես ճիշտ է, թե՝ ոչ: Այն օգնում է կյանքում ճիշտ որոշումներ կայացնել:

3. Օգնում է ուժեղ մնալ

Բարոյական արժեքներն օգնում են մանկուց ամուր բնավորություն ձևավորել: Լավ արժեքներն ու համոզմունքները օգնում են նրանց ուժեղ լինել ցանկացած իրավիճակում և ոգեշնչում են նրանց քրտնաջան աշխատել արդյունքների հասնելու համար և թույլ չտալ, որ նրանք հանձնվեն:

Արժեքների ուսուցման կարևորությունն այն է, որ այն պատրաստում է նրանց հոգեկան վիճակը և ուժեղացնում է նրանց վճռականությունը՝ հաղթահարելու դժվար պայմաններն ու իրավիճակները:

4. Բարձրացնել ինքնավստահությունը

Ներքին խաղաղությունն ու հանգստությունը, որը մարդը ձեռք է բերում ուրիշներին տալով/օգնելով, չի կարող համեմատվել նյութապաշտական երջանկության հետ:

Երեխաները սովորում են, թե ինչքան լավ բան է ուրիշներին օգնելը, և ի պատասխան նրանք նաև զգում են կարիքավորին օգնելու ուրախությունը: Այս երջանկությունը բարձրացնում է երեխաների վստահությունը և դրդում նրանց ավելի շատ նման լավ աշխատանք կատարելու: Այս ինքնավստահությունը օգնում է նրանց կյանքի բոլոր ոլորտներում:

5. Օգնում է երեխաներին պայքարել անարդարության դեմ

Երբ երեխաները գիտեն, թե որն է ճիշտը կամ սխալը, նրանք կարող են ձևավորել ուրիշների ընկալումները: Սովորողներին բարոյական արժեքներ փոխանցելը օգնում է նրանց պաշտպանելու իրենց և ուրիշներին, երբ անարդարություն է տեղի ունենում:

6. Երեխաներին սովորեցնում է մտածել ուրիշների փոխարեն

Երեխաներին լավ արժեքներ և պատասխանատվություն սովորեցնելը նպաստում է, որ նրանք մտածեն ուրիշների տեսանկյունից և օգնել նրանց: Դա կարող է նաև օգնել նրանց իմանալու իրենց կյանքի նպատակը և ինչ լավ բաներ պետք է անեն հասարակության մյուս անդամների համար:

Բարոյական արժեքներն օգնում են մարդկանց ավելի անշահախնդիր լինել և իրենցից առաջ դնել ուրիշների կարիքները:[8]

Հայկական դպրոցների արժեքային համակարգերից ուշագրավ են «Այբ»-ի աշակերտի նկարագրի 8 սկզբունքները: Դրանք են՝

Ճանաչող և արարող

Մարդու ճանաչողության և գործերի ներդաշնակեցումը, տեսականի և գործնականի ճիշտ համադրությունը կամ հավասարակշռությունն «Այբ»-ի կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է:

«Այբ»-ի աշակերտը ճանաչելով ստեղծում է և ստեղծելով ճանաչում:

Նախաձեռնող և հավասարակշռված

[8] https://tokyo.globalindianschool.org/blog-details/teaching-values-to-primary-students

Նախաձեռնողը ոչ միայն ինքնուրույն սկսում կամ ձեռնարկում է որևէ բան, այլև ունի արիություն և համարձակություն սկսածն առաջ տանելու և ավարտին հասցնելու: Նաև յուրաքանչյուր նախաձեռնության մեջ պետք է լինել հավասարակշռված, այսինքն՝ շրջահայաց, խոհեմ և լուրջ՝ պահպանելով ներքին խաղաղությունը և ցուցաբերելով զսպվածություն:

Զգոն և բաց

Զգոն նշանակում է ոչ միայն արթուն, աչալուրջ և զգույշ, այլև՝ ներքնապես ուշադիր և հավաքված:

«Այբ»-ի աշակերտը չի առաջնորդվում սոսկ սեփական հետաքրքրություններով և ցանկություններով, այլ բաց է՝ ունեցածը կիսելու և ուրիշներից իրեն տրված բարիքը շնորհակալությամբ ընդունելու:

Բարեխոհ և հոգատար

«Այբ»-ի աշակերտը ոչ թէ պետք է ձգտի պարզապես ճանաչելու, այլ բարի և բարեբեր ճանաչողության կամ բարեխոհության: Բարին խորհելը և բացահայտելը արդյունավետ ճանաչողության վեկտորն են: Մտքերի բարությունը պետք է արտացոլված լինի նաև մեր գործերի մեջ՝ «Այբ»-ի աշակերտը պետք է լինի հոգատար:[9]

Այժմ ուսումնասիրենք այն արժեքները, որոնք կարող ենք փոխանցել Հայոց Եկեղեցու պատմություն առարկայի շրջանակներում:

Հայրենասիրություն

Ռաֆֆին ասել է. «Հայրենասիրությունն սկսվում է հայրենաճանաչությունից»: Ցանկացած պետության երկարաժամկետ գոյությունը ապահովելու համար անհարժեշտ է ունենալ սերունդ, որն իրապես կսիրի իր հայրենիքը: Սրանից ելնելով՝ ՀՀ «Կրթության մասին» օրենքի՝ «Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը» վերատառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Կրթության բնագավառում **պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է (**թավագիրը՝ հեղ.), որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ

[9] https://aybschool.am/am/

պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, **հայրենասիրության (**թավագիրը՝ հեղ.), պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է»: [10]

Նույն օրենքի 5-րդ հոդվածում, որը սահմանում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, հայրենասիրության դաստիարակությունը նշված է որպես սկզբունք (1-ին մաս):

Ինչպե՞ս է օրենքում նշված սկզբունքը կյանքի կոչվում իրականում:
Նախ՝ նշենք, որ այս մասով մեծ դեր ունի Հայոց պատմության դասավանդումը: Հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը [11]: Հայոց պատմության դասավանդման ժամերին, ուսումնասիրելով հայ ժողովրդի ռազմաքաղաքական, մշակութային և այլ բնագավառների հաջողություններն ու ձախողումները, սովորողները կկարողանան իրապես ճանաչել և սիրել հայրենիքը՝ իր պատմության ողջ բացասականով հանդերձ:

Երկրորդ՝ հայրենասիրությունը չի կարող ձևավորվել միայն Հայրենիքի մասին գիտելիքներ ձեռք բերելով, քանի որ փաստական չոր տեղեկատվությունը մեծ մասամբ ձանձրացնում է սովորողներին: Այդ իսկ պատճառով պետք է աշակերտներին հնավարություն տալ սեփական աշխատանքների միջոցով բացահայտել և սիրել հայրենիքը. կարևոր է նշել, որ քո երկրի մասին գրելը և այն դրականորեն ներկայացնելը բարձրացնում է դրա մասին իրազեկվածությունը, և դու քեզ լավ ես զգում դրա մասին մտածելիս: Աշակերտները սիրում են գրել աշխարհի տարբեր երկրների մասին, բայց հիմնականում անտեսում են իրենցը: [12]

Հետևաբար տարբեր էսսեյները, նախագծային աշխատանքները, սահիկաշարեր և կարճ հոլովակներ պատրաստելը հրաշալի միջոց են հայրենաճանաչողության և, հետեւաբար, հայրենասիրության դաստիարակության համար: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր

[10] https://www.arlis.am/documentview.aspx?docid=166466
[11] Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ-էջ 5
[12] https://www.whereyat.com/why-we-should-teach-students-patriotism-at-school

մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Անհատական աշխատանքում դաստիրակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորում են համառություն, ինանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը,
որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի
նկատմամբ»[13]: Հայրենասիրության դաստիարակության համար գործնական մեթոդ է պատմական դրվագներ վերապրած մարդկանց հետ կենդանի շփումը. օր.՝ պատերազմի վետերանների հրավիրումը դասերին՝ քննարկման համար:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի շրջանակներում հայրենասիրության դասավանդումը էական նշանակություն ունի: Սահմանդրության 18-րդ հոդվածի առաջին մասն ամրագրում է. *«Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:»* Երկրի կարևորագույն փաստաթղթում Եկեղեցու և նրա առաքելությունների հիշատակումը հաստատում է և գնահատում է Եկեղեցու դերը Հայոց պատմության մեջ: Առարկայի շրջանակներում պետք է մանրամասն ուսումնասիրվի Եկեղեցին՝ որպես ազգային և ազգապահպան ինստիտուտի դերը և բացատրվի՝ ինչու հայրենասիրության պարտադիր տարր պետք է լինի հարգանքը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու նկատմամբ:

Սակայն հարգանքի սերմանումը պետք է լինի առանց կրոնական քարոզչության և այլոց կրոնական համոզմունքները վիրավորելու: Իսկ Եկեղեցու

[13] https://editprint.am/students-data/%D4%B1%D6%80%D5%B4%D5%AB%D5%B6%D5%A5%20%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6.pdf

պատմության 11-րդ դասարանքի դասագրքում առանձին թեմա է նախատեսված հայրենասիրության համար, հետևաբար, լինելով հումանիտար առարկա, Եկեղեցու պատմություն առարկան ևս ունի կարևոր դեր հայրենասիրության դաստիարակման գործում:

Ազգային ինքնության բացահայտումը և դրա փոխհարաբերակցությունը համամարդկային արժեքների հետ

Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ուուսուցումը:

Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:

Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը

կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:[14]

Անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչպիսի եղանակներով կարող ենք ազգային ինքնությունը բացահայտել դասերի ընթացքում: Օրինակ՝ ԱՄՆ-ում հետևյալ եղանակն է կիրառվում.

«...Աշակերտները դասը կսկսեն հաշվի առնելով այն գաղափարը, որ ազգերը, ինչպես և անհատները, ունեն ինքնություն: Նրանք նաև կքննարկեն ազգի ինքնության և այդ ազգը կազմող անհատների ինքնության հարաբերակցությունը: Այնուհետև նրանք կդիտարկեն ԱՄՆ-ի ժողովրդագրության փոփոխության և աճող բազմազանության ապացույցները և կվերլուծեն, թե ինչ է հուշում այդ տեղեկատվությունը երկրի ազգային ինքնության բարդության մասին: Ի վերջո, ուսանողները կարձագանքեն այն գաղափարին, որ միասնական ազգային ինքնությունը պահանջում է գիտելիք և արժեքներ, որոնք կիսում են ազգի բոլոր անհատները, և նրանք կքննարկեն մի շարք գաղափարներ այն գիտելիքի և արժեքների մասին, որոնք միավորում են ամերիկացիներին:»[15]

Կարծում ենք՝ ամերիկյան այս մոդելը հայկական իրականությանը և կրթական համակարգին համապատասխանեցնելը իրատեսական է: Այս հարցում Եկեղեցու պատմություն առարկան մեծ դերակատարություն ունի՝ հաշվի առնելով, որ մեր ազգային ինքնության մասը կազմող տոները և ծիսակատարությունները, որոնք նշվում են անգամ աթեիստների և այլադավանների կողմից, այնքանով, որքանով դրանք չեն հակասում իրենց համոզմունքներին, կարգավորվում են Հայ առաքելական սուրբ եկեղեցու կողմից և դրանց նախաքրիստոնեական պատմությանը և հետքրիստոնեական բովանդակային փոփոխություններին ծանոթանալով՝ սովորողները կսկսեն տոներին այլ հայացքով նայել և պատկերացնել որպես ազգային ինքնության յուրօրինակ մաս:

---

[14] https://editprint.am/students-data/%D4%B1%D6%80%D5%B4%D5%AB%D5%B6%D5%A5%20%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6.pdf

[15] https://www.facinghistory.org/resource-library/many-voices-one-national-identity

Եկեղեցու պատմություն առարկայի ընթացքում նաև ուսումնասիրվում են միջազգային համբավ ունեցող այնպիսի հայ եկեղեցականներ, ինչպիսիք են՝ Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Տաթևացին և այլ գործիչներ:

Հաշվի առնելով, որ ՀԱԵ-ն մաս է կազմում համաշխարհային քրիստոնեական եկեղեցիների մեծ ընտանիքին և քրիստենությունը լուրջ աղբյուր է եղել դարեր շարունակ մարդկային քաղաքակրթության, մարդու իրավունքների և ազատությունների զարգացման համար, ուսումնասիրելով Եկեղեցին և դրա առանցքը կազմող համամարդկային արժեքները, ուսանողները սկսում են համադրել ազգայինն ու համամարդկայինը և հասկանալ, որ դրանք ոչ թե իրար հակասում են, այլ ընդհակառակը՝ փոխլրացնում:

Այս առումով անհրաժեշտ է իմանալ, որ բարոյական արժեքները կազմում են քրիստոնեական հավատի առանցքը, և այս դասընթացի նպատակն է նպաստել սովորողների բարոյական նկարագրի ձևավորմանը: Սա դասընթացի հիմնական առանձնահատկությունն է, ուստի չափազանց կարևոր է դասավանդումը մեթոդապես ճիշտ կազմակերպելը: Հետևաբար՝ անհրաժեշտ է հանգամանորեն ուսումնասիրել դասընթացի ծրագիրը, դասանյութերը, մեթոդական ապարատը, դասերի լուսանցքները և ձեռնարկը: Քանի որ դասերը քննարկման և վերլուծությունների լայն հնարավորություններ են տալիս, կարելի է մեթոդական տարբեր հնարների միջոցով՝ համապատասխան դասերի ներքին տրամաբանության և նպատակների շրջանակներում ստեղծել քննարկումների միջավայր՝ չկորցնելով ուղղորդող կենտրոնի դերը:[16]

10 պատվիրանների միջոցով արժեքների փոխանցումը

10 պատվիրանները ունեն ոչ միայն կրոնական նշանակություն, այլև հիմք են հանդիսանում ներկա ժամանակակից իրավակարգերի մեծ մասի համար, ինչպես նաև ընդհանուր համակեցության նորմերի համար: Այսինքն՝ իրենց բնույթով

[16] https://vayotsdzoritem.wordpress.com/2013/02/26/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4-10-11-%D6%80%D5%A4-%D5%A4%D5%A1%D5%BD-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%AB-%D5%B1/

համամարդկային են և հիմնաքարային: Այս հոդվածի շրջանակներում կանրադառնանք այն պատվիրաններին, որոնք հնարավորինս զերծ են կրոնի քարոզչությունից: 10 պատվիրանների մասին սովորողները տեղեկանում են 10-րդ դասարանում: Ցույց տանք, թե ինչ արժեքներ կարող են ձեռք բերել սովորողները այդ թեման ուսումնասիրելիս:

Պատուի՛ր քո հօրն ու քո մօրը, որպէսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրայ, որ Տէր Աստուած տալու է քեզ:

Սա կարող է լինել մի փոքր հնաոճ արտահայտություն այսօրվա համար: Մենք կարող ենք դա մեկնաբանել այն իմաստով, որ մարդիկ պետք է քաղաքավարի և հարգալից լինեն իրենց ծնողների, խնամակալների կամ , ընդհանրապես, մեծահասակների նկատմամբ:

Մի՛ սպանիր:

Այս մեկը բավականին պարզ է: Այն դեռ կիրառելի է ժամանակակից կյանքում: Իրականում, այս պատվիրաններից մի քանիսը բավականին լավ կանոններ են, որոնց պետք է հետևել՝ անկախ նրանից՝ քրիստոնյա եք, այլ հավատք ունեք կամ ընդհանրապես հավատք չունեք:

Մի՛ շնացիր:

Պատվիրաններից մի քանիսը, ինչպես այս մեկը, հավատարմության մասին են:Աա ամուսնական երդումներին հավատարմության մասին է: Այս պատվիրանն ասում է, որ ամուսնացած մարդիկ պետք է հավատարիմ լինեն միմյանց և այն երդումներին, որ տալիս են ամուսնանալիս:

Մի՛ գողացիր:

Մեկ այլ պարզը: Անկախ նրանից՝ դա մանր բաներ են, թե ավելի մեծ գողությունները, այս Պատվիրանն ասում է, որ մարդիկ պետք է հարգեն ուրիշների ունեցվածքը և չգողանան դրանք:

Կարող ենք եզրակացնել այս Պատվիրանից, որ կա քրիստոնեական արժեքների, աշխարհիկ (ոչ կրոնական) արժեքների և իրավունքի համընկնում: Պատվիրանները պարզապես կարող են դիտվել որպես միջոց՝ օգնելու մարդկանց հասկանալ ճիշտն ու սխալը:

Քո հարևանի դէմ սուտ վկայութիւն մի՛ տուր:

Այս պատվիրանն ասում է, որ մենք պետք է միշտ լինենք ազնիվ և ճշմարտախոս: Դա նշանակում է, որ մենք չենք կարող սուտ ասել այլ մարդկանց մասին, քանի որ դա կարող է շատ ցավեցնող լինել:

Ո՛չ քո մերձաւորի տան, ո՛չ նրա ագարակի վրայ աչք մի՛ ունեցիր: Ո՛չ քո մերձաւորի կնոջ վրայ, ո՛չ նրա ծառայի վրայ, ո՛չ նրա աղախնու վրայ, ո՛չ նրա եզան վրայ, ո՛չ նրա էշի վրայ, ո՛չ նրա անասունի վրայ, ո՛չ այն ամենի վրայ, ինչ քո մերձաւորինն է, աչք մի՛ ունեցիր:

Սա նշանակում է, որ մարդիկ չպետք է ցանկանան բաներ, որոնք պատկանում են այլ մարդկանց: Դա կարող է հանգեցնել գայթակղության և սխալ բան անելու, օրինակ՝ գողանալու[17]

Ի՞նչ մեթոդներ կարելի է կիրառել

Հաշվի առնելով, որ Հայոց եկեղեցու պատմությունը պատմության ենթաճյուղ է, ապա Հայոց պատմության դասաժամերին կիրառվող մոտեցումները վերաբերելի կլինեն Եկեղեցու պատմության դասավանդման շրջանակներում: Իսկ ՀԵՊ դասագրքերում կառուցվածքային առումով կիրառվել են նոր դասամոդելներ՝ դասերի հիմնական մասը կազմված է մուտք–հիմնական դասանյութ–մեթոդական համակարգ սկզբունքով:

Դասերի մեթոդական համակարգում առաջարկված են նոր ժամանակակից մեթոդներ, որոնք կնպաստեն դասապրոցեսի արդյունավետ կազմակերպմանը և դասանյութի լիարժեք յուրացմանը:[18]

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը լուծու է այնպիսի դաստիրակչակն խնդիրներ, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է

ընդհանուր դաստիրակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական և խմբային աշխատանք, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել

---

[17] https://www.twinkl.com.ph/teaching-wiki/ten-commandments-of-god

[18] Հայոց եկեղեցու պատմ. 7-9-րդ դաս. ուսուցչի ձեռնարկ

արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը:

Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն:

Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է: Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ,ն ույնիսկ փորձառու ուսուցչի համար: Դա կախված է մի շարք գործոններից,

1. սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների
   գիտակցումից և կատարումից,
2. նպատակներից, ինչպես նաև ուսումնադաստիրակչական և զարգացնող խնդիրների լուծումից,
3. ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից,
4. դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից,
5. սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու ՝ պատմության դասերի ուղղվածությունից,
6. դասերի ժամանակ համաշխարհային և ազգային պատմության համամասնության պահպանումից,
7. պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից, միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանալուց և այնպիսի պայմանների ստեղծումից , որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք,
8. սովորողների մոտ տեղեկատվություն աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից,

9. ստեղծագործական, զգացմունքային մթնոլորտի ձևավորումից, որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը , դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, աշակերտների տարիքը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաղումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները:[19]

Փոլ Ռիչարդ Քյունը իր հոդվածներից մեկում ներկայացրել է իր փորձառությունը՝ ինչպես է դասի ժամանակ տարբեր հնարքների կիրառմամբ արժեքներ փոխանցել իր սովորողներին: Ստորև կներկայացվեն այն հնարքները, որոնք, մեր կարծիքով, կիրառելի են Եկեղեցու պատմության դասաժամերին:

1. Պատմություններ պատմելը և կարդալը

Բոլոր երեխաները, հատկապես փոքրերը, հաճույքով են կարդում ժողովրդական հեքիաթներ պատմություններ, որտեղ կենդանիներն են գլխավոր հերոսները: Դա ցույց է տալիս Միկի Մաուսի եւ Դիսնեյի մյուս հերոսների մեծ հաջողությունը: Բարոյական արժեքների մասին պատմությունների լավագույն աղբյուրներից մեկը կարելի է գտնել Եզոպոսի առակներում: Այս փոքրիկ պատմվածքները, որոնցում հիմնականում ընդգրկված են կենդանիների կերպարներ, պարզ արտահայտված են և փոխանցում են մարդկային կյանքի ճշմարտությունը:

2. Երգեր սովորել և երգել

Երեխաների մեծ մասը սիրում է սովորել երգելով: Դեռահասներն ու մեծահասակները նույնպես սիրում են երգեր և երգել, հատկապես, եթե նրանք

[19] https://editprint.am/students-data/%D4%B1%D6%80%D5%B4%D5%AB%D5%B6%D5%A5%20%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6.pdf

կարողանում են նույնականացնել երաժշտությունը իրենց հետ: **[այս կետը կիրառելիս պետք է ուշադիր լինել, որ չոտնահարվեն սովորողների կրոնական զգացումները-հեղ.]**

3. Պատմվածքի դերակատարում

Ժողովրդական հեքիաթները և պատմվածքները բեմականացնելը միշտ եղել է լսարանային և խոսակցական գործունեության մաս, որը ես (Փոլ Ռիչարդ Քյունը-հեղ.) օգտագործում էի դասարանում: Երեխաների մեծամասնությունը սիրում է հագնվել և կատարել տարբեր կերպարների դերեր: **[Եկեղեցու պատմության դասաժամերին մենք կարող ենք բեմականացնել հայ առակագիրների առակները, Հիսուսի առակները կամ Աստվածաշնչյան տարբեր պատումներ-հեղ.]**

4. Խաղեր խաղալ

Դասարանում կրթական խաղեր խաղալը համագործակցություն սերմանելու հիանալի միջոց է: Ես (Փոլ Ռիչարդ Քյունը-հեղ) դա արեցի՝ դասարանը բաժանելով 4–5 ուսանողներից բաղկացած թիմերի: Թիմերը մրցում էին միմյանց հետ՝ օրինակ տեսնելու համար՝ որ թիմը կարող է հինգ րոպեում գրատախտակին գրել ամենաշատ ածականները կամ մակդիրները:[20]

Եզրակացություն

Այս աշխատանքի շրջանակներում ուսումնասիրեցինք, թե ինչպես կարելի է սովորողների շրջանում արժեհամակարգ ձևավորել դասապրոցեսի և հատկապես Հայոց եկեղեցու պատմություն առարկայի շրջանակներում: Ոլորտի մասնագետների կարծիքների, ներպետական իրավական ակտերի և մի շարք մասնագիտական աղբյուրների համադրման արդյունքում կարող ենք եզրակացնել, որ արժեհամակարգի ձևավորումը դպրոցական կրթության հիմնական նպատակն է և վերջնարդյունքը: Տարբեր մեթոդների և եղանակների կիրառմամբ այդ նպատակին հասնելու արդյունավետությունը մեծանում է, իսկ սովորողները իրենց կարիքներին և հետաքրքրություններին համապատասխան սկսում են հասկանալ այդ արժեքների բովանդակությունը և դառնալ դրանց կրողը:

[20] https://soapboxie.com/social-issues/How-to-Teach-Moral-Values-in-Schools-Five-Useful-Classroom-Activities

Այս ամենի արդյունքում կզարգանան նաև բոլոր այն ութ կարողունակությունները (կոմպետենցիաները), որոնք նախատեսված են ՀՊՁ-ում: Այն է՝

1) լեզվական գրագիտություն և կարողունակություն
2) սովորել սովորելու կարողունակություն
3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5) թվային և մեդիա կարողունակություն
6) մշակութային կարողունակություն.
7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
8) տնտեսական կարողունակություն

Միայն կայուն, պատմությամբ փորձված և համամարդկային արժեքների վրա հիմնված արժեհամակարգն է, որ կկարողանա ձևավորել այնպիսի երիտասարդ առաջնորդներ, ովքեր կարողանան իրենց նախաձեռնողականությամբ, հայրենասիրությամբ, գրագիտությամբ ու բարոյական նկարագրով առաջնորդել հասարակությանը, դիմակայել մեր երկրին նետված մարտահրավերիներին և դուրս բերել մեր ժողովրդին դեպի խաղաղ, կայուն, զարգացած եւ անվտանգ հանգրվան:

Գրականության Ցանկ

1. Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:

2. Ս. Գալոյան, Ֆինլանդիայի հանրակրթական համակարգը, Մանկավարժություն, # 3, 2010,
3. https://mediamax.am/am/column/121177/
4. Ա.Ս. Գալստյան, Նոր բառեր, Պրակ Ա, Երևան, «ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ», 2015
5. https://tokyo.globalindianschool.org/blog-details/teaching-values-to-primary-students
6. https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf
7. Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում
8. https://aybschool.am/am/
9. «Կրթության մասին» օրենք
10. Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ
11. https://www.whereyat.com/why-we-should-teach-students-patriotism-at-school
12. https://editprint.am/students-data/%D4%B1%D6%80%D5%B4%D5%AB%D5%B6%D5%A5%20%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6.pdf
13. https://www.facinghistory.org/resource-library/many-voices-one-national-identity
14. https://vayotsdzoritem.wordpress.com/2013/02/26/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4-10-11-%D6%80%D5%A4-%D5%A4%D5%A1%D5%BD-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%AB-%D5%B1/
15. https://www.twinkl.com.ph/teaching-wiki/ten-commandments-of-god
16. Հայոց եկեղեցու պատմ. 7-9-րդ դաս. ուսուցչի ձեռնարկ